

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.  
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.  
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.  
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Նվազագուծականը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են  
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.  
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգեցութեան շրջաններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Առօրեայ հարցեր. Նամակ Նոր-Բայա-դէտից. Նամակ Շուշադէտից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Թիւրքական զորքերի շուրջը. Նամակ Պարսկաստանից.—ՆԵՐԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թուրքիկ տպագրութիւններ.

## ԱԶԳԻ ՅՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Ում ազգեցութիւնը պէտք է գերա-կշռող լինի Պարսկաստանում, Թիւրքի-ա-յում, Տիբեթում, Չինական Թիւրքեստանում և ուրիշ կիսանկախ երկրներում—անա մի բաց, որ տարիներ շարունակ զբաղեցրել է եւրոպական քաղաքագէտ-ներին և որը առանձին նշանակութիւն է ստացել ներկայումս:

Այս տարվայ սկզբում քաղաքական մա-մուլի մէջ դրված էր հարց, թէ ինչպէս պէտք է բաժանել Մակեդոնիայում ազ-գեցութեան շրջանները և որ պետու-թիւնը Մակեդոնիայի որ մասում պէտք է իր գործերով ապահովէ խաղաղութիւնը և բարենորոգումները ներմուծումը: «Memo-rial Diplomatique» լրագիրը մինչև անգամ ներկայացրեց իր կողմից մի ծրագիր այդ հարցի առիթով: Բայց այդպիսի ծրագիր-ները մի կողմ թողնելով, որովհետև ա-ւելի բարւոյ համարվեց խուսափել այդ պիսի պատասխանատու քայլից և բէֆօրմ-ները մտնել եւրոպական բոլոր պետու-թիւնների համաձայնութեամբ ընդհանուր հսկողութեան տակ: Այժմ քաղաքական մամուլի մէջ մենք նկատում ենք փոքր-ծրագրերու ազգեցութեան շրջաններ Թիւր-քիայի ասիական ողորդում: Անգլիան շատ կը ցանկար Սուէզի ասիական ամերիկա-գերագոյն ազգեցութիւն ունենալ և նոյն-պէս Արաբիայի ամերիկա և Պարսից ծո-ցում: Ֆրանսիան վաղուց իր բարոյական հովանաւորութեան տակ է համարում

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԹՈՒՆԻՍԻ ՏՊԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Նամակ եղիպտոսից)

I

Դարեր առաջ եղիպտոսում հայերի մի հոծ գաղթականութիւն ապրելու է եղել, ունեցել են զինուորական խումբ, գիւղաբնակներ, վա-նքեր ու եկեղեցիներ, որոնք այսօր գոյութիւն չունեն, նոյն իսկ մեր կաթողիկոսներից մէկը առժամանակ ապրել է Ալեքսանդրիայում: Թողնենք այս և անցնենք ներկայ հայ գաղ-թականութեան:

Կէս դար առաջ եղիպտոս ընկալութիւն հա-տաւոր հայ գաղթականութիւնը, որը բաղկա-ցած է եղել մեծ մասամբ Փորը-Ասիայի գաւա-ռական տարրից, այժմ բոլորովին օտարացել է. խօսում են միայն արաբերէն, ներքին ու ար-տաքին հայութեան ոչ մի նշան չէք տեսնում նրա վրա, միայն անունով է հայ, տարին մի անգամ գտնել եկեղեցին է գալիս, յաճախ արա-բական կամ եւրոպացու անուն է կրում—Աղիզ բէյ Եւսուֆ, Գրէգուար Գէլի, և այլն:

Իսկ վերջին տասնամեակում եղիպտոս հա-տաւոր նոր գաղթականութիւնը կարճ ժա-մանակից յետոյ նոյն վիճակին է եկեղեցի-լու Նոր սերունդ, երիտասարդութիւն կոչ-վածն էլ մեծ մասամբ բաղկացած է Պոլսի ծայրայեղ հոսանքական տիպից, որի միակ նը-պատակակէտն է հարստանալ ու դիրք գրաւել, շատ ցանցաւ բացառութեամբ. իր այս նպա-տակին հասնելու համար փաշաների, բէգերի, էֆէնդիների առաջ ստորանում է, նրանց շո-ղորդում է և բժնում: Սրանք մէջ կան, որ իրանք իրանց գրողի և հասարակական գոր-

Լեւանտը, Սիրիան և Զմիւռնիայի շրջա-նը: Գերմանիան ձգտում է բացառիկ դիրք և ազգեցութիւն հաստատել Փորը-Ասիայի երկաթուղիների շրջանում: Այդ-պէս և ուրիշ պետութիւններ աչքի ա-ռաջ ունեն ապահովել իրանց համար ար-տօնութիւններ:

Սակայն պետութիւնները միմեանց հետ մրցում են և նրանցից իւրաքանչիւրը յոյս ունի յարմար դէպքում բացառիկ մեծ ազգեցութիւն շահելու իր համար: Այդ պատճառով այդպիսի մի ծրագիր մինչև այժմ աշխուժիւն չէ ունեցել: Բայց ու-րովհետև Եւրոպան, զբաղված ծանր հանգա-մանքներով, ժամանակ առ ժամանակ ստիպված է ուշադրութիւն դարձնել Թիւր-քիայի վարչական կեանքի վրա և հարցա-տահարութիւններին ու աղէտների ստացն առնել, հանդէս է գալիս այն հարցը, թէ ով պէտք է իրագործէ պահանջած բա-րենորոգութիւնները և ապահովէ ազգա-բնակչութեան կեանքը և նրա ստացուած-քը: Ուստի եւրոպական քաղաքագէտները անհրաժեշտ են գտնում, որ Փորը Ասիա-յում նոյնպէս մտցնվեն այն բոլոր բարե-նորոգութիւնները, որոնք ծրագրված են Մակեդոնիայի համար: Այդպիսի մի օրի-նական վարչական պահանջի իրագործու-մը Թիւրքիայի կողմից թէ կը հանգը-տացնէր յուզված մտքերը և թէ կը յետա-ձգէր ազգեցութեան շրջանների բաժա-ման խնդիրները, որոնք ծանրաշփոթ են իրանց բնաւորութեամբ և ընդունակ են մեծ ընդհարումներ առաջ բերելու:

Եւրոպական քաղաքագէտները օգտվում են յարմար դէպքերից իրանց քաղաքական շահերը առաջ մղելու և իրանց ազգեցու-թեան շրջանները ընդարձակելու: Եւ մի-միայն փորձադարձ մրցութեան ու երկիւ-ղի ուրուական է, որ թէլադրում է զգոյշ քայլեր անելու և լուրջ ընդհարումների առաջն առնելու:

Ժիշի (?) հովեր են տալիս և իրանց վրա դըր-ված յոյսը արդարացում են սրճարանների անկիւններում նարդախտա, սանդուխտ, թուղթ և այլն խաղալով և ժամանակները սպանելով... Ոչ մի շինիչ, ոչ մի լուրջ գործ չունեն. գաւա-ռացի կենսունակ տարն էլ նրանց հոսնու-թեան մէջ շաղախվում և խմորվում է:

Գալով հարուստներին, զ, սրանց մասին չար-ժէ իսկ խօսել. ձուլը գլխից է հոսում, ասում է առածը. դրամը անբարոյականացնող մի տարր է կազմում հարուստների համար. դրամի բոլոր տակ ծածկում են իրանց բոլոր ան-բարոյական գործերը, իրանց տգիտութիւնը, իրանց ոճիրները և նոյն իսկ դրամի փաշով շլացնում են ամբողջ հեքիաբը և կաշառում են հասարակութեան օգտին ծառայող (?) զրիշնե-րը, կորզելով այս բոլորից խնկարկումներ, գո-վասանքներ, փառաբանութիւններ, փայփա-յումներ, յարգանքներ...

Եղիպտոսի հայ հարուստները բոլոր հասա-րակական գործերին անտարբերութեամբ են վերաբերվում. եթէ երբեք հասարակական գործերի համար մի քանի կոպէկներ տալիս են, այն էլ ողորմութիւն տալու նման շարժ-ւում են. մէկ մասն էլ փառասիրութեան հա-մար է տալիս, լրագրիներում—շողորդութիւն և փողոցային լրագրիներում—իրանց անունների շուրջը աղմուկ բարձրացնելու և կամ պատ-րիարքից օրհնութեան կոնդակներ կորզելու համար: Վաւաճողներից (?) մին Աթէնքում կառուցվելիք յուսնական մի եկեղեցու համար ինքնաբերաբար 500 ֆրանկ է նուիրում, մի-այն այն պատճառով, որ տեղական թերթերը իր մասին խօսեն և Յունաստանի պաշտօնա-կան շրջաններից շնորհակալութեան զիւր ստա-նայ:

Հարուստներից շատերը իրենց հարստու-թիւնները դիզել են գրեթէ ազօրինի միջոց-

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՌՈՐԵԱՅ ՀԱՐՅԵՐ

Ծանր մտածմունքների մէջ է ընկնում մարդ, երբ տեսնում է թէ ինչպէս ամեն մի գեղեցիկ գործ մեր մէջ ենթարկված է անտարբերու-թեան: Շատ անգամ մենք վկայ ենք լինում, թէ ինչպէս ուրիշների մօտ մի որ և է հիմ-նարկութիւն աճում, զարգանում և ամուր հիմքի վրա է կանգնում և որին հայերից շա-տերս նպաստում ենք թէ մեր եռանդուն գործունէութեամբ և թէ նախակամով: Բայց երբ կազմակերպվում է մի և նոյն տեսակ մի բան հայերիս մէջ,—մենք անտարբերութիւն ենք ցոյց տալիս և ամեն կերպ խոյս տալիս գործից: Փանի քանիսները մեզանց անդամ են զանազան «Վէյթիսիսիսիսիսիսի» և «Նախա-կութիւններ» ընկերութիւններին, որոնց համար մինչև 100—200 ռ. անդամավճար են տալիս: Իսկ եթէ այդպիսիներին առաջարկվում է ան-դամ զբղիւ մեր մի հիմնարկութեան, 5 ռուբլի անդամավճարով, բաց է ի բաց մերժում է ստացվում. Ի՞նչն է պատճառը այդ անտար-բերութեան: Միթէ ինքնաճանաչութիւնը մե-զանում դեռ այնքան էլ զարգացել, որ կարո-ղանանք հաստատ հիմքերի վրա դնել մի հան-րօգուտ գործ:

Մեր առաջ դրված է այժմ հայոց Դրամա-տիական ընկերութեան հարցը: Այս մի գե-ղեցիկ հիմնարկութիւն, որը արժանի է խրա-խուսանքի ամեն մի հայի կողմից, լինի նա թիֆլիսեցի, թէ գաւառացի: Բայց ի՞նչ է ցոյց տալիս իրականութիւնը: Մարդ ամաչում է այն ստիպել անտարբերութիւնից, որ ցոյց ենք տալիս մենք դէպի այդ օգուտէտ գործը: Ամեն մի գործ, երբ նա մի բիշ դժուարու-թիւնների է ենթարկվում, ընդունում է այդ բանում մեղադրել զեկավարիչ մարմինը: Բայց Դրամատիական ընկերութեան վերաբերեալ, մեզ թւում է, աններելի կը լինէր այդ մե-ղադրանքը բացառապէս բարձր վարչութեան վրա: Ինչքան էլ մի վարչութիւն եռանդով և հմուտ կերպով գործէ, դարձեալ անաշուղտ-

ներով. նոր սերունդի մէջ էլ կան սրանց ըն-թացքին հետեւողներ: Երեւակայեցէք, որ ազ-գային հաստատութիւնների մէջ պաշտօն և աթոռ ունենալու համար, ընտրութեան ժա-մանակ ընտրողներին փողով կաշառում են, որպէս զի աւելի բուէներ շահեն!!!, մինչդեռ ուրիշ տեղեր հայերը այդ կարգի պաշտօնե-րից փախչում և հրաժարվում են:

Գանիբէի և Ալեքսանդրիայի ազգային կա-ռուածներէն տարեկան 4000 լիւրայի (40,000 ռուբլի) հասոյթ է գոյանում և եթէ այս կա-ռուածները լաւ մատակարարվելու լինեն, տա-րեկան եկամուտը կարող է մինչև 5000 լիւրայի բարձրանալ: Այսքան հարուստ եկամուտ ու-նեցող գաղթականութիւնը մինչև իսկ կանո-նաւոր ծխական մի դպրոց չունի: Գանիբէում և Ալեքսանդրիայում գաղթիւն ունեցող զբա-րոցները պարզապէս անկարող ուսուցիչների և ուսուցչուհիների անկեղանոցներ են դարձել. ուսուցչական կոչման անարժաններ, մանկա-վարժութիւնից բան չը հասկացողներ և նոյն իսկ յայտնի անբարոյականներ ու փաշայները—բէյերի բանահաճոյքին ծառայող պոռնիկներ մուտ են գտել այդ սրբազան յարկերի տակ և անխղճօրէն շահագործում են մատաղ սերուն-դի կրթական գործը:

Ուսուցչուհիներ և ուսուցչուհիներ պաշտօնի են կոչվում այս փաշայ կամ այն բէյի բանահա-ճոյքի շնորհիւ, և ի հարկէ նրանց առաջ բժնող, նրանց շողորդութիւն և պաշտօն մուրա-լու աստիճան ստորնացողներն են, որ ըն-տրվում են. բաւական է, որ մի փաշայ կամ բէյ հրամայեց, իսկոյն հրամանը կատարվում է, դատարկագործը, անարժան չաղ ոտձիկով ուսուցիչ է կարգվում:

Եղիպտոսում կատարեալ ամբարյութիւն է տիրում. թէ երբեմն մեռած սանձադրու-թեան անունը լսվում է, սակայն իրականու-

թիւնների կը հանդիպի, քանի որ գործ ունի մի անհոգ հասարակութեան հետ:

«Անցեալ կիրակի,—կարգում ենք «Մշա-կում»,—նշանակված էր Հայոց Դրամատիա-կան ընկերութեան անդամների արտակարգ ընդհանուր ժողովը: Նա չը կայացաւ և, շատ պարզ, սովորական պատճառով, անդամները չէին եկել: Այսօր ժողովը կը կայանայ, որով-հետև, գոնէ պէտք է յուսալ, որ 10 հոգի ներ-կայ կը լինեն»...

Տասը հոգի ներկայ կը լինեն... Այս թէ ինչպէս ենք մենք վերաբերվում դէպի մի հա-սարակական գործ: Դրանից յետոյ, անշուշտ, զարմանալի չէ, որ ընկերութիւնը տարեց տա-րի դէֆիցիտ է կրում և այժմ էլ զբաղված է միջոցներ փնտռելով այդ դէֆիցիտը ծածկե-լու համար:

Յուսաւ, որ երբ և իցէ մեր կրեստներից մէկը մի խոշոր գումարով ընդմիշտ կապա-նովալցնէ ընկերութիւնը,—դա ցնորք կը լի-նէր: Նոյն իսկ պ. Աթիլիկեանի պէս մարդիկ մեզանում հազուադէպ են:

Յոյս չը դնելով խոշոր նուիրատուութիւնե-րի վրա, վարչութեանը մնում է կողմնակի կեր-պով այդ դժուար դրութիւնից դուրս գալ: Մի կողմ թողնելով թիֆլիսում կատարվելիք այդ մասին, մենք կառաջարկենք. արդեօք գաւառը չէ՞ կարող մասնակցել այդ գործում: Միթէ չէ կարելի ապրել Բաթումում, Բազում կամ Ե-րևանում և անդամ լինել Դրամատիական ըն-կերութեան: Չէ՞ որ դա ընդհանուր մի գործ է և բոլորիս արտին մօտ: Պէտք է կարծել, որ հէնց այդ երեք քաղաքներում ամենապակասը մի 500 անդամ կը գտնվի: Իսկ թէ ինչ մի-ջոցով, այդ այնքան էլ դժուար չէ. այդ բա-ղաքներում կը գտնվեն անշուշտ մարդիկ, որ կաշողեցնեն այդ գործը: Բայց այդ, մի կողմ թողնելով Բազում և Երևանը, մի առաջարկու-թիւն ևս կանէինք Բաթումի վերաբերեալ: Չէ՞ր կարող արդեօք Դրամատիական ընկե-րութիւնը սեզօնի ընթացքում, ազատ օրերը, ուղարկել դերասանական խումբը մի քանի ներկայացում տալու Բաթումում: Եթէ այդու-վի սեզօնի ընթացքում մի 5 ներկայացում

թեան մէջ ամբարյականութիւնն է իշխում. ժողովրդի ձայնը երբեք չէ յարգվում, միայն ընտրութիւնների ժամանակ ամեն միջոց գործ են դնում այդ ձայնը իրանց կողմը շա-նելու համար, և արդիւնքը լինում է փաշայ-ների, բէյերի և ջոշերի ընտրութիւն: Այս օ-րերումս Գանիբէում 14 հոգուց բաղկացած երեսփոխանական ժողովի անդամների ընտ-րութիւնն է կատարվում. ընտրվածների ցան-կը եթէ աչքի առաջ ունենանք, նրանց մէջ կը տեսնէք մեծ մասամբ տղէտ, նոյն իսկ լիզու չիմացող և դպրոցից մի բան չը հա-կացող փաշայներ, բէյեր և ջոշ վաճառական-ներ, իսկ բիշ շատ զարգացած, կրթված և դպրոցից մի բան հասկացող մարդիկ կամ շատ բիշ ձայն են ստացել և կամ ընաւ չեն ընտրվել: Սակայն իրաւացի կերպով պիտի աւարկէք, որ այդ բանում մեղաւորը նոյն ինքն ժողովուրդն է, որ իր քուէն տալիս է այդպիսի անարժաններին. իրաւունք ունէք, ժողովուրդը մեծ մասամբ տղէտ և ան-տարբեր լինելով, ինչպէս և ամեն տեղ, այս-պիսի պարագաներում մի քանի մարդկանց ձեռքում պարզ գործիք է դառնում և իր իս-կական շահերի հակառակ է վարվում. ան-կեղծ, անձուէր և ալտրուիտական գաղա-փարներով խնդրելիքն ուղծեր են հարկաւոր, որպէս զի այս կարգի դէպքերում ժողովրդին ուղղութիւն տան և նրանց շահերը պաշտպա-նեն: Դժբաղդաբար եղիպտոսը այդպիսի ոյ-ժերից զուրկ է և սրանց փոխարէն գոյութիւն ունեն պոլսական թիթևաօլիկ և հարկանցի կրթութիւն ստացած հոսնոս երիտասարդներ, որոնք մեծ մեծ ջարդում են և ոչինչ չեն շինում հիմնական ու տեւական:

(Կը շարունակվի)

տալու, կարծում ենք, որ ընկերութեան օգտին կարող է մնալ գուտ ոչ պակաս քան 1000—1200 ռ.: Թէև այնքան էլ մեծ գումար չէ, բայց չը պէտք է մոռանալ, որ կաթիլնե-րից գետեր են կազմվում...

Ար. Մակարեան  
Բաթում.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՅ

Յունիսի 1-ին

Մայիսի 30-ին, կիրակի, տեղիս երիտա-սարգութեան նախաձեռնութեամբ, պատարա-գից յետոյ հոգեհանգիստ կատարվեց Ստ. Նա-զարեանցի մահվան 25-ամեակի առթիւ: Աւազ քահանայ Ե. Տէր-Միքայէլեանցը ման-րաման կերպով ծանօթացրեց հանդիսական-ներին հանգուցեալի փառաւոր անցեալի և հասարակական գործունէութեան հետ, յիշա-տակելով Ս. Նազարեանցի հետ նաև Ս. Արտ-վանին, իբրև նրա գաղափարակից ընկերին, որը միջնորդել էր գերմանացի պրօֆէսոր Պար-բոսին բարեխրատելու նաև Ս. Նազարեանցին, ինչպէս բարերար էր հանդիսացել իրան—Ա-րտվանին: Ապա աստիճանաւոր պ. Կ. Տէր-Սահակեանց կարգաց մի փոքրիկ ոտանաւոր հանգուցեալի յիշատակին նուիրված, որ թարգ-մանել էր ռուսերէնից: Ժողովուրդը գոհ սրտով հեռացաւ եկեղեցից:

Մի շաբաթ հաջիւ կը լինի, ինչ ցանքսը վերջացել է. կանօնաւոր ցանկուն արգելք էին դառնում փոփոխական եղանակները: Ցանկեղին վերջապէս բոլորովին անաշոյ պայմաններում, ցարի, ձինի և անծամանակ տեղացող յոր-դաւատ անձնակների տակ: Հողագործների մե-ծամասնութիւնը տարօրինակ տպաւորութեան տակ է գտնվում, երկիւղ կրելով, որ մի գու-ցէ ցանքսերը փչանան վերջին ցրտերից, որ տեղի ունեցան մայիսի ամբողջ ընթացքում: (Մայիսին երեք անգամ միւս եկաւ): Առ այժմ բուսականութեան մասին մի որոշ բան չէ կա-րելի ասել: Ինչ կը լինի ապագայում,—գար-ծեալ չը գիտենք: Միայն այն կարող ենք ա-սել, որ բարեխաղող կլիմայի աղբեցութեան տակ բուսականութիւնը հետզհետէ կարող է կանխանորդել և իր բաւարար արդիւնքը տալ:

Հողորդներ նաև մի ուրախալի լուր.—ինչ-պէս շատերին յայտնի է, Նոր-Բայազէտում, իբրև մի յետնկած գաւառական խուլ անկիւ-նում, պօստը ստացվում է շաբաթը երկու ան-գամ միայն և նոյնպիսի էլ դուրս գնում: Իսկ ամսին 5-ից արդէն լինելու է շաբաթական երեք անգամ: Դա մի փոքր միջիթարութիւն է տեղական հասարակութեան համար, որը օրե-րով սպասում է թարմ լուրեր ստանալուն: Մինչդեռ մեր թէ պաշտօնական գրագրու-թիւնները, թէ լրագրիւնները և թէ առհասարակ բոլոր նամակները օրերով դիզվում են եւե-նովկա կայարանում և ապա բոլորը միաժա-մանակ մի օրում ստացվում (օրինակ օրաթեր-թիւրը 4—5 մի անգամ են ստացվում, իսկ 2-ը՝ միանգամ): Իսկ այժմ շնորհակալութեան ար-ժանի է միանգամայն այն միջնորդութիւնը, որ մեր գաւառապետ պ. Ստ. Ղորղանեանցի կողմից արվեց պատասխան վարչութեան առաջ՝ պօստը շաբաթը երեք անգամ դարձնելու հա-մար մեր խաւար անկիւնում:

\*\*\*

ՆԱՄԱԿ ՇՈՒԼՈՒԻԻՅ

Յունիսի 6-ին

Այսօր մեր հասարակութիւնը ս. Մեսրոպը եկեղեցու գաւթում հողին յանձնեց իր ար-դիւնաւէտ գործիչ Սիմէոն Պառաւեանցի մար-մինը:

Հանգուցեալը պատկանում էր այն հազուա-գիտ երիտասարդներին, որոնք իրանց համար գործունէութեան սպաքեղ են ընտրում գիւ-ղը: Նա ստանձնելով 1887 թւին տանուտէ-րութեան պաշտօնը, սկսեց սաստիկ կռիւներ մղել ֆեոսակար մարդկանց դէմ ու կարգի գրեց մեր գիւղական բոլոր խառն գործերը:

Հանգուցեալը թէև մտանաւոր կրթութեան տէր մարդ էր, բայց նրա բնական խելքն ու վարչական ընդունակութիւնը միանգամայն գովելի էին: Նրա ջանքերով գիւղը բերվեցին Բլրլան և Ջանդուղարան յայտնի աղբիւր-ները, կառուցվեց տղայոց երեք յարկանի փա-ռաւոր դպրոցի շէնքը, նրա շնորհիւ հիմք դրվեց հողեր գնելուն ու իր սեփական հաշուով հիմնեց օրիորդաց դպրոցը, որը այժմ էլ գոյութիւն ունի և կոչվում է Գայանեան-Պառաւեան:

Հանգուցեալի փչրող բնաւորութիւնը սար-սափեցրել էր հակառակորդներին: Այսօր, երբ

տասը տարի է հեռացել էր ասպարէզից և ասպրում էր խաղաղ, այգու մէջ թաքնված սրիկայի գնդակը վերջ տուեց նրա կեանքին:

Ամեն անհատ էլ իր պակասութիւնն ունի, որից զերծ չէր և Պառաւեանը, բայց նրա լու-կողմերը շատ գերազանց էին: Զուր չը նկա-տեց դամբանական կարգացող Բաղդասարեա-նը, որ Պառաւեանը բաշ էր, բաշի պէս էլ մեռաւ: Թող մեր երիտասարդները երբէք չը վախենան այս վայրենի դէպքից: Երկար խօ-սեց և պատարագիչ Սաթուհեան եպիսկոպոսը: Դամբանական խօսեց և Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանը, նկարագրելով հանգուցեալի ամբողջ գործունէութիւնը:

Գուրգէն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ՝

1903 թւի Զատիկի ժամանակները մենք հա-ղորդել էինք Ալեքսանդրօպօլի գաւառի Բայան-դուր գիւղից մի շատ տարօրինակ և դաշնա-կան լուր. մի հայր՝ Իվ. Ասլամազով, Բայան-դուրի ուղղափառ եկեղեցու առջև գտնված հրապարակում մտքել էր իր նորածին երեխա-յին, ասելով, որ Աստուծոյ հրամանով զոհ է բերում նրան: Այդ «կրօնասէր» գաղան-հայրը ձերբակալված էր և գործի ընտելութիւնն անցել էր Թիֆլիսի նահանգական դատարանը, ուր մօտ օրերս տեղի ունեցաւ դատը: Ասլամազովը իր քայլը բացատրում է այսպէս. երկու տարի առաջ ինքը հիւանդ էր: Նրան երեւցին Ս. Նիկիւլայը և Ս. Յովհաննէսը, որ տարան իրան Յիսուսի առաջ: Քրիստոսն ասաց նրան, որ կը բժշկվի, եթէ խոստանայ, որ իր որդուն զոհ բերէ իրան: Հիւանդը խոստանում է և շու-տով ցաւից ազատվում: Շուտով Զատիկի տօ-ններից մի քիչ առաջ, Ասլամազովի կինը բե-րում է մի արու գաւառ: Մեղադրվածը Զատիկի տօնից մի քանի օր առաջ համաձայն իր խոս-տումի՝ նորածինը զոհ է բերում Աստուծուն, դիւրի եկեղեցու առաջը, ապրիլի 5-ին: Մե-ղադրվածին դրել են Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցի հոգեկան հիւանդներին բաժինը, ստուգելու, թէ արդեօք դա կրօնական-խելա-գարութեան արդիւնք է, թէ նա մտաւորապէս առողջ է և ուրիշ ոճրագործական բացատրու-թիւն պէտք է որոնել:

Գանձակը շարժվում է: Այնտեղի վաճա-ռականների մի խումբ խնդրել է տուել ֆի-նանսների մինիստրութեան, որ թոյլատրեն Գանձակում բաց անել փոխադարձ վարկի ըն-կերութիւն՝ Շուտով եղածի ձեւով: Գանձակե-ցիները բնաւորութիւնը շատ պարզ որոշում են այդ վերջին բանից: Նրանք նեղութիւն չեն կրում մտածելու, ինքնուրոյն, որ և է նոր բան ձեւաւորելու,—այլ միշտ՝ եթէ «բարի սնանքի ուստ եկաւ», Շուտով, երեւոյց, Ա-լեքսանդրօպօլից օրինակ առնելու: Նահանգա-կան քաղաք Գանձակում բացի ազօլօ-գօնեան բանկի ստորաբաժանումից՝ ոչ մի ուրիշ փո-խատու հիմնարկութիւն մինչև օրս չը կայ: Այն ինչ պտղաբեր երկրի աճապին թուլ մանր ապեհաւերները, գինեգործներն ու վաճառական-ները վաղուց կարիք ունեն էժան ու մանր կրեպիտի:

Թիֆլիսի քաղաքի անօնիմ ընկերութեանը հաղորդում են, որ արդէն Բաթում են հասել էլեքտրական քարշակների համար յատկացված դինամօմաշինները և ուրիշ իրեր: Ենթադրվում է, որ քաղաքի մի քանի գլխաւոր գծերի վրա էլեքտրական շարժումը կը սկսվի հոկտեմբերին:

Անդրկովկասի ոռոգականութեան գործադիր ծառայողներին ճանապարհածախքը (разъезд-ныхъ денегъ) որոշված է ներկայ տարվայ ընթացքում 70,800 ռուբլի:

Մայրաքաղաքի լրագրիւնները հաղորդում են, որ ռուսական բոլոր երկաթուղիները մուտքը 1903 թւին եղել է 644 միլիօն ռուբլի: 1902 թւին եկամուտ ստացվել է դրանից 45 միլիօն պակաս, իսկ 1901-ին 25 միլիօն պակաս 1902 թւի եկամուտից:

Թիֆլիսի երկրորդ արական գիմնազիան աւարտել են հետեւեալ հայ աշակերտները. Հասարակեան Արմենակ (Ախալքալաքից), Յով-հաննիսեան Ալեքսանդր (Մեծ-Շէնից), Բար-սամեան Յովհաննէս (Ալեքսանդրօպօլից), Տէր-Ղևոնդեան Տիգրան (Թիֆլիսից), Արուշանեան Արշակ (Թիֆլիսից), Արուշանեան Նիկողայոս (Թիֆլիս), Ղևոնդեան Գրիգոր (Երևանից), Յով-հաննիսեան Մկրտիչ (Ախալքալաքից), Պամ-պալեան Սիմէոն (Թիֆլիս), Եղիազարեան Նի-

կողայոս (Թիֆլիս): Արտակարգ կամ էքստերն ընտելութիւն տուին և աւարտեցին 3 հայեր—Արզումանեան, Կոստանեան և Բարխուդա-րեան:

ԿԱԶՈՒՄՆԻՅ մեզ հաղորդում են հետե-ւեալը: «Այս տարի պտղատու ծառերը լաւ-գարգացել են և աշող բերք են խոստանում, մանաւանդ ծիրանի ծառերը, որոնք մի առան-ձին պտղաբերութիւն են ցոյց տալիս այս տարի: Սակայն, դժբաղդաբար, խնձորենիների վրա երևացել են մեծ քանակութեամբ քրո-թուցներ, որոնք սպառնում են զգալի ֆլա-սներ հասցնել ալգեաէրերին:

ԲԱԹՈՒՄԻՅ մեզ գրում են. «Կիրակի, յու-նիսի 6-ին, ցերեկվայ ժամը 1-ից սկսած դէպի «Ժողովրդական տունը» տանող լայն ճանա-պարհը բռնած շտապով գնում էին մարդ ու կին, մեծ ու փոքր. սաստիկ շոքն ու անտա-նելի փոշին առ ոչինչ համարելով ուրախ ու-րախ դիմում էին դրանք դէպի հեռուից լավող երաժշտութիւնը: Գործարաններում ու նաւա-հանքատում բանող հայ մշակների ու գործա-կատարների բազմութիւնն էր սա՛ իրանց տան մեծ ու փոքրով: Մի ծայրը սրահի մօտ դրված սեղանին էր հասել, որ իրար հերելով տոմսակ էին առնում «աղա 2 բլիթթ, աղա 3 բլիթթ, 4 բլիթթ»... անդադար կրկնելով: Մի ժամից յետոյ այլ ևս ժամու տոմսակ չը կար: «Ժո-ղովրդական տան» ընդարձակ սրահի մէջ լուռ ու մռնշ կանգնած կամ իրանց տեղերը նըս-տած անհամբեր սպասում էին վարագոյրի Աստղազէտը... Բաթումում առաջին ժողո-վրդական ներկայացուցիչն էր սա, մի խումբ երիտասարդների եռանդի ու աշխատանքի ար-գիւնքը: Վերջապէս Բաթումն էլ հետեւելով միւս քաղաքների օրինակին բացեց ժողովրդական թատրոնի դռները հազարաւոր մշակների, հա-րիւրաւոր գործակալատարների ու սրանց ըն-տանիքի առաջ: Այսուհետեւ ամբողջ մի քանի անգամ տեղիս քաղաքի սրճարաններն ու գինեաները կը զրկվին իրանց մշտական ան-դամներից, դոմիտի, թաւլին ու խաղաթուղ-թը հանգիստ կառնեն կիրակի օրերը գոնէ մի քանի ժամով՝ սպաքեղը թողնելով բեմին: «Ամեն բանի սկիզբն է դժուար», ասում է գեր-մանական առածը. գեղեցիկ գործի սկիզբն արդէն դրված է. պէտք է կանօնաւորել, հաս-տատ հիմքի վրա դնել ու հռչակով շարունա-կել: Նոյն օրը երեկոյեան «Երկաթէ թատրոն»-ում փոքրաթիւ հասարակութեան առաջ նո-րաւարտ երգիչ պ. Գ. Բոյաճեանն տուեց իր առաջին կոնցերտը, որը դժբաղդաբար անա-շող անցաւ: Տկար էր արդեօք երգիչը, վրդով-ված թէ... չը գիտենք, միայն ծանր տպաւո-րութեան տակ և ի սրտէ ցաւելով հեռացաւ հասարակութիւնը:

ՓԻՐՁԱՄԱԼ գիւղից (Շուշու գաւառ) մեզ գրում են. «Մեզանում» հունձը սկսված է և առատ բերք է խոստանում. լաւ է նմանապէս այգիների բերքը: Տեղացիներն ունեն երկու տեսակ այգիներ՝ թթի, որից բաշում են օղի և խաղողի—որից պատրաստում են գինի: Գիւղացիների զխառն պարագմունքներից մէկն է օղի քաշելը և գինի պատրաստելը: Բացվել է ամառանոց եկողների սեղօնը. հա-մարեա թէ ամեն օր նոր-նոր եկողներ են լինում: Եղանակները փոփոխակի են՝ մեր թ անձրեային, մեր թ—արեային: Եթէ այսպէս շարունակվելու լինեն եղանակները, օղի գոր-ծարանատէրերը կարող են ֆլաւելը:

ԿՈՒՍԱՊԱՏՈՒՅ մեզ գրում են. «Երգուեալ հաւատարմաւոր Ներսէս Աթաբէկեանի անա-կնկալ մահվան լուրը մեր հասարակութեանը մեծ ցաւ ազդեց: Այսօր խուռն բազմութեան ներկայութեամբ ս. Աստուածածնայ և ս. Յով-հաննու Մկրտչի եկեղեցիներում Կուսապատի հասարակութիւնը խորին վշտակցութեամբ հոգեհանգիստ կատարեց: Հանգուցեալը ընկ կուսապատից էր (հին շրաբերդի) և մեր Ջիւղայից գաւառում մեծ յարգանք էր վայե-լում թէ հայ և թէ թուրք ազգաբնակչութեան կողմից:

ԳԱՐՎԱՆԱՐԱՎ գիւղից մեզ գրում են. «Յու-նիսի 3-ին հաղախ գաւառի Գարվանսարա գիւղում մեզ համար անօրինակ սպանութիւն-ներ տեղի ունեցան: Ահա երկու թիւնը: Գօշ գիւղացի Միխակի և Սօլօմօնի որդիներն ու մօտ բարեկամների մէջ չնչին պատճառներից վէճեր և թշնամութիւն է ծագում: Սրա հետե-

ւանքը այն է լինում, որ Միխակի որդին և եղբոր որդին, որպէս պատմում են, վերջերս յարձակվում են անտառում անպաշտպան Սօ-լօմօնի երեք զաւակների վրա և երկուսին սպանում, իսկ մէկին վիրաւորելով և կարծե-լով թէ սպանված է, անյայտանում են: Երբ սրանց դիակները գտնվում են, վիրաւորը պատ-մում է դէպքը և մասնացոյց անում սպանող-ներին: Ծնողները դանգաւ են բաց անում: Սպանվածների երկու եղբայրները, որոնք Ղազախի ուրիշ գիւղերում ծառայութեան մէջ էին, լսելով իրանց եղբայրների մահը, շտա-պում են Գօշ արեան վրէժը արշնուով լուծե-լու: Սակայն Գօշում իմանում են, որ սպա-նողները Միխակի հետ գնացել են Գարվանսա-րա, ուր տեղական պրիստաւը ընտելութեան էր կանչել. ուստի իրանք էլ այնտեղ են ճանա-պարհ ընկնում: Գարվանսարայում իմանում են, որ Միխակի եղբորորդին խանութներից մէկում ընած է, շտապով ներս են մտնում, վեր են կացնում ընածին և գնդակահար անում: Ապա այնտեղից դուրս գալով գնում են սպա-նելու Միխակին, որը մի ուրիշ խանութում, դաշոյնը ձեռքին սպասելիս է լինում թշնամի-ներին: Եղբայրները մտնում են խանութը և վիրաւորում Միխակին, որը հաւասարակշու-թիւնը պահպանելով՝ դաշոյնի մի ուժեղ հար-ւածով անշնչացնում է մեծին և ապա վերջին ուժերը հաւաքելով՝ մի մահադու հարուածով ծանր վիրաւորում է փոքրին և ինքն անշնչա-ցած գետին է փռվում: Նոյն երեկոյեան սպան-վածներիս սայլերով ուղղակիցին իրանց գիւղը նոր ցաւ և կսկիծ պատճառելու այն ծնողնե-րին, որոնք արդէն երկու սպանված և մի վի-րաւոր զաւակ ունէին և այժմ տանում էին միացած երկուսին ևս: Այս սպանութիւնները չնչին պատճառներից են առաջացել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՁԸ

Նապօմական փոխադրող նաւերի կործանման մանրամասնութիւնները Տօխիօց հեռագրում են. «Վլադիվոստօկի էսկադրայի գործունէու-թեան մասին հաղորդված տեղեկութիւնները հաստատում են, որ փոխադրող նաւերի վրա յարձակվելու մէջ գլխաւորապէս մասնակցու-թիւն ունէին «Րօսսիեան» և «Գրօսիեան» կրէյ-սերները: Նրանք երկուսով կրակ բացին «Մի-տաշիմարու» և «Սաղօմարու» նաւերի դէմ: Ռաբակոնութիւնը սկսելուն պէս «Րօսսիեան» նա-ւից արձակված ռումբը, զարնվելով «Միտա-շիմարուին», հրդէհ գոյացրեց նրա վրա: «Սա-ղօմարու» նաւը դիւնուրական կոմիսարը գնաց «Գրօմօրօյ» նաւը, ուր ուս ծովապետը յայտ-նեց նրան, որ «Սաղօմարուին» նա տալիս է 40 րօպէ ժամանակ: Մինչ այդ ահան արձակ-վեց «Միտաշիմարու» դէմ, որ ջրասույզ դար-ձաւ: «Սաղօմարուին», ստանալով ծանր ֆլա-սներ, պահվում էր ջրի երեսին: Ռուսները, երեկ, կարծում էին թէ նա էլ «Միտաշիմա-րուի» պէս կը լինի, թողին նրան ու հեռա-ցան: «Սաղօմարուին», սաստիկ ֆլաւված լի-նելով, տարվեց ծովային հասանքով ու չը բա-րոյացաւ օգնել «Միտաշիմարուին», որի օֆի-ցերներն և նաւասարներն մեծ մասը թափ-վեց ծովի մէջ և խեղդվեց: Ազատվեցին միայն 79 հոգի, որոնց հաւաքեցին եապօնական այն նաւերը, որոնք աղէտի տեղը հասան միւս օրը առաւօտեան: «Սաղօմարուին» երկուս էր Օկինոյիմա կղզուց 6 մղոն դէպի արեւելք. նրան տանում էր հոսանքը: «Իզօմարու» և «Միմօմարու» շոգեմաները մօտեցան «Սաղ-օմարուին» և առաջինը վերցրեց ֆլաւված նա-ւից օֆիցէրներին և բոլոր նաւաստիներին, որոնց անփորձ հասցրեց Մացուրիւրիմա կղզ-դին: Պաշտօնապէս հաստատվում է, որ փո-խադրական նաւերից ազատված են 814 հոգի: Պաշտօնապէս հաղորդված է, որ «Տօլալիմա-րու» շոգեմանը ընդունել է իր վրա 37 հոգի, որոնք ազատվել են «Միտաշիմարու» փոխադ-րանաւից: Ազատվածները պատմում են, որ ռուսները սկզբում թշնամեթ արձակեցին, բայց առանց ռումբերի, լոկ վառօդով: Յետոյ թշնամին կրակ բացեց գնդաձիգներից, նաւի վրա գտնվողներից շատերը սպանվեցին: Ռուս-ները մօտեցան նաւին և սկսեցին ոմբակոծել եապօնական նաւը: Մերքեան ֆլաւվեց և նաւը այլ ևս չէր կարող շարժվել: Փոխ-գնդապետ Սէչին այրեց դրօշակը և սպանվեց: Նրա վեր-ջին խօսքերն էին. «Շտապեցեք հաղորդել պատահածի մասին»: Այն ժամանակ, երբ շո-գեմանը փորձում էր հեռանալ ռուսներից, ուղղվելով դէպի հիւսիս-արեւմուտք, նա կա-րողութիւն չունէր մակոյկներ իջցնել: Բայց



